

են պարզելու համար անոնց գերը հոգիին յեղաշրջման գործին, և կրօններու զարգացման պատմութեան մէջ, ճշգրիտ արժէքը ճշմարտութեան, մենակեցութեան, կուսութեան ուխտերու:

Իր քերթողութիւնը ծանրաբեռնում է գործին, ըլլալով եկամուտ տարր, ճոխացնելու համար տողերը, զոգ մը ճարելու համար զգացումներուն: Խորդ կուգայ պատկերներ պարզելու իր ճիգը, բանասիրական նկարագրով աշխատանքի մօտեցող նշման հատորի մը մէջ: Ու, թող ներուր բառը, պոռոտ է հետտորութիւնը, արդիւնք, թեւրեւ, նախանձայնիկ, «Վերմեռանդ ուխտաւոր» ի իր ոգևորութեան . . . :

Կ'ուզենք եզրակացութեան մը բերել մեր գիտողութիւնները:

«Կորնքեան նամականի»-ն, իբրև զրական գործ, հակառակ մեր տողերուն կարգ մը մատնանշումներուն, ի յայտ կը բերէ արժանիքներ, որոնք էջերու ետեւէն կը գծեն դէմքը հեղինակին: Թէև չենք ճանշնար զինք, բայց լսելու ենք իր մասին, իբրև կրօնական զգացումի ցայտուն յատկութիւններով օժտուած անձ մը: Եւ ասիկա կը զգացուի, գործին տեսակէտէն անյաջողութիւն համարուած էջերուն մէջէն իսկ:

Չունինք, կամ, մատի վրայ կը համրուին անուններ, որ համարձակութիւնը ունենան կրօնական տեսակէտ մը որդեգրել, քրիստոնէական զգացումի մը խորքով մօտենալ, պատմական, իմաստասիրական իրողութիւններու և երևոյթներու: Այս հատորին դժուարանալով հանգերձ պատուոյ տեղ մը տալ «յաջող գործ»-երու կողքին, չենք կրնար հանրութեան չյանձնարարել սոյն ոգին, որուն գաղափարովը հարուստ է ու տաք, անոր գրեթէ ամէն էջը:

Զարգացած միտք, լեզուին տիրացած գրիչ, ճոխ՝ բառամթերքով ու գիտելիքներով, հմտութիւն. ահա յատկանիշեր որոնք արժանի կը դարձնեն հեղինակը համակրանքի: Ու ասոնց վրայ աւելցուցէք յուզումի, համոզումի, կորովի, ներշնչումի և զգացումի որոշ շնորհներ:

Այսպէսով կ'ունենանք «Կորնքեան նամականի»-ն, որ մեր գրականութեան կրօնական բաժինին մէջ պիտի կարենար իր արժանաւոր տեղը գտնել, թեթևացած եթէ ըլլար իմաստասիրական գրութիւններու ճշմարտաներէն:

ԹՈՐԳՈՄ ԱՔԵՂԱՅ

ԴԻԻԱՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԱՅ

ԻԲ

ԺԲ. զլիսով սահմանագրութիւն Է(*).

Շնորհօք եւ ողորմութեամբ բարերարին Աստուծոյ զրեցաւ զիրս սահմանագրութեան եւ ուխտագրութեան զգուշական եւ կանոնական համայն ազգիս Արամեան, հաւանամբ երկուց երեւելի աթոռատիրաց, Աստուծոյն ամենակալի մարմնաւորի տեղեաց եւ Որարչին մերոյ զմեզ ի լոյս կոչելոյ, Յակոբայ եւ Եղիազարու ըստ նարդենիս բարեսէր կաթողիկոսաց եւ ըստ ժամանակիս երեւեալ նախանձախնդիր աստուածային օրինաց՝ հոգիւնկալ վարդապետաց: Եւ ոչ եթէ նորաձեւ իմն յառաջ ածեալ, ալ զայն զոր ի նախնեացն արձանացեալ եւ հնազոյն կանոնօք ամրացուցեալ, զի յետ սակաւ աւուրց մինչեւ ցմեղահա տեսակ խանդարեալ զկարգ նախնեացն, եղծեալ եւ շփոթեալ կրօնք քրիստոնէականք ի սխալմանէ տգիտաց փառամուրաց եւ ի տարածայն կաթողիկոսաց, որք ոչ նուաճեցան ի ներքոյ աստուածադիր կանոնաց, յորոց տիրեցին անհնարին խռովութիւնք ի մէջ եկեղեցեաց եւ յոլով աղմուկ եւ աղաղակ ի մէջ ժողովրդականաց: Որոց պատճառէ հարկ եղեւ վերոյգրեալ կաթողիկոսաց եւ նշանաւոր վարդապետաց գալ ի միարանութիւն սիրոյ եւ խաղաղութեան սակսօգտի եւ շահարկութեան հասարակ ազգի:

(*) Երբ Եղիազար Բերիոյ մէջ կաթողիկոս կ'օծուի, օրհնութեան կոնդակ մը կ'ուղղէ Օսմանեան տէրութեան ամէն կողմերը, խոստանալով նաեւ ծրի միւռնոն քաշիւնլի: Բայց տեսնելով որ Մարտիրոս վրդ. Ղրիմեցիի զրգամբ Յակոբ Ջուլայեցի կաթողիկոս զինուած է իր դէմ ու շարունակ կոնդակներով կը յորդորէ ժողովուրդը հակառակի իրեն եւ չընդունի իր ապօրինի իշխանութիւնը, զայն միաժամանակու եւ էջմիածնի Աթուին իրաւունքները պայտօնելու համար՝ ատաներկու յօգուածներէ բաղկացեալ սոյն Կանոնը կը պատրաստէ, խոստանալով անթերի գործարդել զայն: Յակոբ Կաթողիկոս քայէ ի քայ կը մերժէ այս Կանոնը, որուն յօգուածները Քէպէտ մեծ մասամբ 1651ին երուսաղէմի մէջ Ս. Էջմիածնի Փիլիպպոս եւ Սիսի Ներսէս կաթողիկոսներու միջեւ սահմանադրուած յարեւմտեան կ'երեւին, սակայն Երրորդ եւ Չորրորդ յօգուածները ուղղակի կը հակառակին նախնի կանոններուն ու կը կայացնեն Ամենայն Հայոց Հայրապետի իրաւունքները:

Ծ. 2.

եւ ժողովրդեան: Եւ այս ոչ իւրից կայանայ եւ գլխաւորի՝ եթէ ոչ տեւառնակտակ բանիւ զոր հրամայէ եթէ՝ Ձխաղաղութիւն իմ տամ ձեզ: Քանզի Աստուած կամեցաւ ծանրագին գնել զխաղաղութիւն, զի Որդին Աստուծոյ չարչարեցաւ, խաչեցաւ, թաղեցաւ եւ եթող մեզ գանձ զխաղաղութիւն՝ հանգերձ սիրով: Եւ զի Որդին արար զուգակցութիւն ընդ քեռ մերուս՝ այսինքն ընդ մարդկային բնութեանս, զի նորոգեցի աշխարհի խաղաղութիւն: Վասն որոյ և տակաւին եւս պարտ է ծառայից Տեառն, եւ մանաւանդ այնոցիկ որք երեւին իր աշակերտք նորին, խորհլ վասն խաղաղութեան ազգի եւ եկեղեցւոյ, եւ ջանալ զի հաստատեցի, կայացի եւ արմատացի անջրելի կանոնաւ եւ անսղալ գաշնակցութեամբ եւ պայմանաւ:

Առ որ հակիրճ բանիւ եւ երկար խուզմամբ եղան նշան սիրոյ եւ ուխտագրութեան գլխաւորք այսոքիկ ի մէջ երկուց գերադրական աթոռոց, այսինքն ի մէջ Սուրբ Երուսաղիմայ եւ ի Սուրբ Էջմիածնին՝ ըստ նախնական սահմանաց:

Նախ՝ զի մեռնին սուրբ, որ օրհնի ի յաթոռ Սուրբ Լուսաւորչին ի Սուրբ Էջմիածին, բաշխեցի այն ըստ սովորական պայմանին ի ձեռն երեւելի առաջնորդաց որք ի մայրաքաղաքունս, եւ ի նոցանէ ծորեցի առ ժողովրդականքն, ըստ այսմ՝ Որպէս իւզ զի իջանէ, զի եւ նոքա տայցեն զմարմնաւոր նուէրս մեծի աթոռոյն, ոչ որպէս թէ գին մեռնի՝ այլ իբր հոգեւորական եւ մարմնաւորական աղբրսուն իրերաց: Գոնեա զի սովաւ բարձցի տրտունջ եւ աղաղակ ժողովրդեան, եւ կարկեսցի բերան անզգամաց:

Երկրորդ՝ զի նըւիրակունք Սուրբ Երուսաղիմայ որք երթիցեն յաշխարհն արեւելեան, շրջեցին հրամանաւ Էջմիածնայ կաթողիկոսին, ըստ նախնական սովորութեան, եւ խնդրեցեն զխոստմունս եւ զողէրածինս եւ զնուէրս Սուրբ Երուսաղիմայ որպէս զՏունն Յունաց. եւ մի ոք ընդդիմացի յեպիսկոպոսաց կամ վարդապետաց կամ ի վիճակաց արքեպիսկոպոսք կաշառական պատճառաւ, եւ կամ այլ ինչ խորթ եւ օտար խօսիւք, զի եղծուին մեծի սիրոյն յայսպիսի իրաց ծնանի:

Երրորդ՝ զի բնաւ մի՛ ձեռնադրեցէ կաթողիկոսն կրկին եպիսկոպոս ի վերայ

միոյ վիճակի, այլ որպէս է հրաման կանոնական՝ ի մեռանել միոյն յառաջիցի մեռն եւ այս եւս ստոյգ ընտրութեամբ եւ թարց կաշառաց. նաեւ որք ի մեծամեծ քաղաքաց են՝ ունիցին զվկայութիւն յերուսաղիմայ կաթողիկոսէն:

Չորրորդ՝ զի յորժամ որ հրաւիրէ ոք ի պատիւ կաթողիկոսութեան ի Սուրբ Էջմիածին, լիցի պայման զի խնդրեցի վկայութիւն կաթողիկոսէն Սուրբ Երուսաղիմայ: Ըստ նոյն սարասի եւ ի գահն Քրիստոսի նստողն ունիցի գիր հաւանական ի կաթողիկոսէն Սուրբ Էջմիածնայ. գոնեայ զի այսու պատճառաւ մնացէ եկեղեցի Քրիստոսի ի վերայ գլխաւոր պատուիրանին, առ որ եզերին բովանդակ վարդապետութիւնք Տեառն ի նոյն բան, որով ճանաչիմք եթէ ժառանգաւորք նորա եմք. մանաւանդ թէ սովաւ գոյ հնար մերձենալ մարդոյն առ Աստուած, որ է վախճան եւ ծայրագոյն բարի:

Հինգերորդ՝ լիցի հաւատարմութիւն առ միմեանս անսխալ սիրով, զի ապստամբեալն ի միմեանց բնաւ մի՛ ընկալ[լ]ցին ի ժառանգութիւն աստիճանի: Ի գոնաբացէն մինչեւ ցեպիսկոպոսն. զայնպիսին պարսքարեցի յերկուց կողմանց, մինչ գարձցի առ իւր վարդապետն. ապա թէ ոչ կամեսցի՝ վտարեցի յերկուցունց, որպէս զի թափեցի եւ կեղեցի Քրիստոսի ի գողոց եւ յաւաղակաց:

Վեցերորդ՝ ընտրութիւն, զի որք չողին ի յազգէ մերմէ ի ժառանգաւորաց եկեղեցոյ ի Հոռոմ թարց ի մէնջ առաքելոյ եւ գրոյ եւ առնուն զկարգ նոցին, յայնպիսեաց գարձեալքն ի մեզ մի՛ ընկալցուք, որք են յայտնի գայթակղեցուցիչք ժողովրդեան:

Եւ թներորդ՝ հարկաւորեցի եւ այս ըզգուշութիւն եւ արձանագրութիւն, զի որք սպրդին ինքնամատոյց բանիւ վարդապետութեան եւ կամին անձամբ թագաւորել եւ ոչ Աստուծով ի վերայ քաղաքաց յառաջնորդութիւն, մանաւանդ մայրաքաղաքին Կոստանդնուպօլսի, այնպիսեացն լիցուք կշտամբիլ երկուց կողմանց, եւ հաւածելով հաւածեցուք ի տանէ Տեառն եւ գաւթէ Աստուծոյ, այնքան՝ մինչ զի եւ ի թոշակէ այն քաղաքէն, որք են գանձանակի եւ այլ նուէրք որք շնորհին ի պէտս աթոռոյն, խորշելով խորշիմք եւ ոչ առնումք բնաւ ինչ ի նոցանէ եւ նզովելով

նդովեմբ զընդունողս նոցին՝ թէ՛ ի ժառանգաւորաց եւ թէ՛ ի ժողովրդականաց համարեալ լիցին, զայնպիսիսն յաչս երկուց աթոռոցն իբր հերեալ[իկոս] եւ զկողմապիսիս եկեղեցւոյ:

Ութերորդ՝ մեծագոյն վնաս եւ արժանի ողբոյ որ ածի ի մէջ եկեղեցոյ, զի աւանեւին անվարժք եւ անկիրթք եւ որդիք անարժանից յանկեան ուրեք եւս անդէտ եւ պիտկոպոսք ձեւանան եւ ձեռնադրեն քահանայ առանց գիտութեան իւրոյ արքեպիսկոպոսի եւ մանաւանդ թէ բռնաւորօք կաւ մին յափշտակել զընորհան Աստուծոյ, յորմէ լինին անհնարին վէրք ազգիս եւ մեծ խանգարումն եկեղեցւոյ. եւ սակս այսպիսեացն կամեցաք զի ամենեւին մի՛ լիցին այսպիսիքն շահիլ ի կաթուղիկէ եկեղեցի ըստ հաստատուն կանոնի նախնեաց. եւ որք լինին օժանդակ այնպիսեացն ի ձեռն արծաթոյ՝ եւ նոքա եւս արժանի եղիցին նդովից:

Իններորդ՝ հարկաւորագոյն պիտանացու եւ այս՝ զի եպիսկոպոսք, արեղայք կամ երիցունք որք ոչ են տեարք վիճակաց եւ վանից, նաեւ ոչ ունին ժուժք բնակիլ ի ներքոյ ձեռաց արքեպիսկոպոսաց եւ կամ բնակիլ ի վանք եւ յանապատ, այլ շրջին վէս անձամբ եւ խենէշ կրօնիւք ի մէջ անմեղ ժողովրդեանն եւ ոչինչ պէտս աստ եւ անդ ապականեն զկարգ եւ զկրօն եկեղեցւոյ խարերայական ձեռով, զայնպիսիսն կամեցաք նդովիւք խայտառակիլ, եւ ուր եւ գտանիցին՝ հալածելով հալածեցեն ըզնոսա քահանայք եւ ժողովուրդք, նաեւ հաց անգամ մի՛ տացեն նոցա. նաեւ թէ գտանիցի ոք հաւատարիմ նոցին, նա եւս փակեցի ի ներքոյ պատժոց նոցին:

Տասներորդ՝ եւ եւս նուիրակունք երկուց աթոռոց, որ շրջին ի մէջ ժողովրդեանն, հոգ նոցա լիցի միայն զի քաղցրաբան վարդապետութեամբ սուտեցեն զժողովուրդն, եւ մեղմաբար ըստ կարեաց խնդրեցեն զողորմութիւնս եւ բնաւ մի՛ մխնացին ի գործ եկեղեցականի, որ վերաբերի զաւառին եպիսկոպոսի՝ թէ՛ աստիճանի, թէ՛ ճիւղահաշութեան սակս գէեղական ախտին, եւ յուղայեան պատառին, նաեւ բանադրանս մի՛ իշխեսցեն ի վերայ ումեք արձակել վասն ողորմութեան եւ վասն իւրեանց անպատուութեան: Իսկ եթէ յանգսնին

եւ լրբին՝ անէծք իւրեանց յանձինս իւրեանց ընդունեցին, ըստ Իմաստ[նոյն], եւ զկապեալս յումեք մի՛ իշխեսցէ այլ ոք յուծել, որ է ընդդէմ կանոնաց սրբոց:

Մեասասներորդ՝ եւս շահաւէտ քննութիւն եւս՝ զի վարդապետք նորարոյսք, որք ոչ գտանին ի գործառութիւն երկուց աթոռոց եւ ոչ բնաւ գլխաւորաց կամ արքեպիսկոպոսաց, այլ շրջին ի պատճառս փառաւորութեան եւ ազահութեան, զայնպիսիսն մի՛ լիցի ընկալիալ ի քաղաք եւ ի գաւառ, եթէ ոչ ունիցի զնամակ վկայութեան երկուց աթոռոց:

Երկոտասներորդ՝ եւ պիտոյանայ հարկաւոր քննութիւն սակս արքեպիսկոպոսաց եւ գաւազանաց րաժանութեան վոր թողաք ի մեծ ժողովուն եւ հարուստ գիտնականաց ի պատկանաւոր ժամու: Բաւ է:

ԻԳ

Արդնցի Ոհան վրդ. Էրզրումէն առ Եղիազար կաթողիկոս ի Կ. Պոլիս(*):

Յաւէտագոյն իմն փառօք բարդաւաճեալ եւ ճշմարիտ հանճարով ամէնունակ Հոգւոյն առ լցեալ, որոյ պատճառէ եւ հանդիսաւոր վիպասիւք անուն քո յսքունս բացափայեալ Տէր Եղիազար յաբունապետ եւ ջատագով աստուածային օրինաց, ընկալլի՛ր ողջոյն ի Յոհաննէ հուսկ վրիպակէ եւ ամենաթշուառ եղբօրէ քումմէ խնդալ քեզ ի Տէր յոյժ յոյժ, ամէն: Ծանիցէ եղբայրութիւն քո սակս կենաց եւ կրից մերոյ, զի յետ գնալուն մերոյ ի տան կաթուղիկոսարանի եւ յանձնելուն մեր ամենայն ախք եւ կարասիք ի նա, յետ աւուրց ինչ եկն առ մեզ ի քէն առաքեալ գեսպանն քոյին սիւլալիւ նամակաւ, յորմէ եւ մեր տեղեկացեալ զքոյդ անախալ սէր եւ գութ եւ իմ ոչինչ յոպաղեալ, իսկոյն ցուցի զգիր եղբայրութեան քո հաւուն (Յակոբ կաթ.ին), եւ առաջինն թէպէտ ընկալայ խոշոր պատասխանիս, բայց յետոյ յոյժ հաւանմամբ եւ սիրով ընկալայ արձակումն, զի թարց ցուցանելոյ քոյդ գրոյ, անհնար էր մեզ ի զերծանելոյ պատրուակայ զրուցով: Եւ արդ

(*) Ընդօրինակութեան մէջ նամակիս վերնագիրն է «Արդնցի Ոհան վրդ.ի գիրն է»:

ահա զինչ և իցէ անջատեալ մեր ի նոցանէ խաղաղական ողջունիւ եկաք յերզրում, Տէր Գալուստն ևս ընդ իս, և անտի չուեմք ի կայան քոյդ տէրութեան վստահանալով մեր ի բարեսէր գութ քո: Դարձեալ, սիրելի՛, թէպէտ մեք յայոց կողմանց ի սպառ ձանձրացեալ՝ հակամիտեցաք առ այս վայր՝ առիթ մեզ ունելով գկաթողին քո գութ, բայց ոչ գիտեմք՝ եթէ ո՞ր երթամք, սակս ոչ գալուն նազելոյդ ի տուն քո: Վասն որոյ այլ բան գլխաւոր քան զայս ոչ ունիմ առ եղբայրութիւն քո աղերսանք, զի զորպիսութիւն քո ստէպ ստէպ ծանուցես մեզ: Ողջ լի՛ր առ յոյսն բնաւից:

Գրեցաւ գիրս յունուար ամսոյ ժը տարն հինգշաբթի (1666):

ԻԴ

Յովնան եպիսկոպոս Ազրիանուսյոյսէն առ եղիազար կարողիկոս ի Կ. Պոլիս(*):

Գերապատիւ եւ գերազարդ եւ հրաշագան, մաքրամիտ եւ սրբազան տեսունըդ վեհիդ մերոյ եղիազար կաթողիկոս հայոց, և պատրիարդ Սուրբ յերուսաղիմայ: Յորմէ հասցէ նըւատ և յետեալ Յոհան եպիսկոպոսէ եւ ընդ ձեռամբ մերոյ եղեալ քահանայիցն և միաբան ժողովրդենէ, և երկցփոխանացն ամենեցուն, մեծամեծաց և փոքունց, մեծ ողջունիւ ծունր և երկըրպագութիւն մատուցանելով համբուրեմք զաստուածաշօշափ աջդ եւ զգարչապար սրբազան հօրդ մերոյ, և միաբան ծառայքս խնդրեմք յԱստուծոյ զի զհանուրց հայրդ մեր մինչև ցայս անփորձ և անսասան կենօք պահեալ է և պահեսցէ, և ընդ երկայն աւուրս արացցէ ի պարծանս մեր և ամենայն հաւատացելոց: Եւ գոհանամք զԱստուծոյ յամենայն ժամ, որ կրկին այցարար Աստուած ժողովրդեան իւրում ի բարութիւն և ետ մեզ կրկին զսրբազան և փայտեան հայրդ մեր հովիւ և առաջնորդ այն սուրբ տանն և պասքեալ ժողովրդեան: Եւ ընդ սիրոյ ողջունի և երկրպագութեանս

մերոյ, և էտրէնու եղեալ ի ծառայիցդ ամենեցուն, յայտնի լիցի վեհիդ եւ սրբազան հօրդ մերում, զի ոչ անտես անելով և յիշելով զամարդութիւնս մեր՝ մոռացեր ես զմեզ, այլ կրկին գթալով և ողորմելով ի վերայ մեր, ձեռամբ խօծա Սահակին օրհնութեան նամակաւ գէտրէնու ծառայքս ձեր մխիթարեր ես, ոչ յիշելով զմեր առաջին պակասութիւն Յորժամ եհաս առ մեզ զիր օրհնութեան քոյին ձեռամբ խօծա Սահակաւ և բերանով ես պատմեաց առ մեզ, մեծ և փոքր ամենեքեան լի եղեն մեծ ուրախութեամբ. ուրախացաք և փառս և գոհութիւն մատուցաք յԱստուծոյ, զի ոչ ի սպառ մոռանայ մեզ Տէր: Եւ ահա՛ առաքեցաք առ սրբութիւնդ քո զմեր հոգեւոր որդին՝ զտէր՝ Յակոբն, որ եկեալ ամենեցունց բերանոյն ողջոյն և երկրպագութիւն տացէ սրբութեանդ և բերան առ բերան խօսեսցի ընդ սրբոյդ, և տեղեկացի ամենայն կողմանց զնեղութիւն ի ստապատիր արանց և անուայ մարդկանց՝ մինչև ցե՛րբ նեղիմք և չարչարիմք և զպատիւ մեր առոտս անկանի, և զերկիրն մեր առաջի աչաց մերոց օտարք կերիցեն և զիշխանութիւն մեր անուղղայք և աննշանք վայելեսցեն: Եւ եթէ զանձանակի կողմանէ հարցանես՝ հազրդ է, ծանր մի թուի հօրդ մերում թէ Սահակն չեմք տըւեր կամ հետ չբերեր: Հրամանուցդ յայտնի է աշխարհիս հայն ամէնն, թէ զո՞վ հազրդ չէր. մեք ահա՛ Յակոբին ասացեր եմք. նա թո՞ղ բերանով ասացէ. զոր ինչ պատուիրես՝ այնպէս առնեմք: Եւ ամենեքեան աղաչեմք, եթէ հնար լինիցի՝ անձամբ քոյին գալ և մխիթարել զպասքեալ զժողովուրդն, զի ստոյգ ստոյգ կարօտ եւ փափաք են եւ սպասեն գալստեան սրբազան հօրդ: Թողութիւն շնորհ[եալ], մեծ պատուոյ արժան ես. սակաւ ինչ վէճեցէկ իբր զլուծայ այրւոյն ընդունիցիք, ողջ լեր: Գրեցաւ յունվար ժդ (1666): Այլ եւ կրկին մեծ ողջոյն եւ օրհնութիւն Յոհան պարոնարէ մատուցի մեր հոգեւոր որդւոյն Սուքիաս վարդապետին և ներսէս տիրացուն, այլ և մահտեսի տէր Մարտիրոսին և տէր Յովանիսին և Երէմիային:

Հրատարակեց՝ Մ. Ե. Ն.

(*) Ընդօրինակութեան մէջ նամակիս վերնագիրն է Այս գիր յետրէնու եկն յՆստամայլ ի Թուրքիա ՌձժԲԸ. կերիւ ժողովրդեան եւ կերիւ եպիսկոպոսին Յոհանու, ի շնորհաւորումն նորոգման իշխանութեան վեհիս մերոյ: